

**ՏԱՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՆՈԳԵՒՈՐ ԽՈՐՆՐԴԱՆՇԱՆԻ  
ՏԵՍԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆԻՄՔԵՐՆ ՈՒ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ**

Խոսելով փաղերգության խորհրդաբանության՝ հոգևոր խորհրդանշանի մասին՝ հարկ է հստակեցնել դրանց փեսական-գաղափարական հիմքերն ու ակունքները: Բնականաբար հիմքերի հիմքը Սուրբ Գրքն է, որին հաջորդում են մեկնաբանական-աստվածաբանական աշխատությունները, որոնց թարգմանությամբ հայոց քրիստոնեական մշակույթի սկիզբը դրվեց: Դեռևս ընդհանրական եկեղեցու առաջին հայրերը բացառիկ կարևորություն էին փալիս Սուրբ Գրքի մեկնությանը, քանի որ այն իր խորհրդական-այլաբանական պարամոլ շարքերին էր մատչելի: Աստվածաշնչի պարամոլի նշանական-այլաբանական ոճը պարամոլի էությանը ոչ հասու գործնական-նյութապաշար մարմնավորության համար եղել է գայթակղության քար բոլոր ժամանակներում:

Սուրբգրային պարամոլները բառացի ընկալելու մոլորությունից բազում զգուշացումներ կան Աստվածաշնչում. Թվոց գրքում Տեր Աստված ուղղակի է խոսում այս մասին. «Ոչ այնպես՝ որպես ծառայն իմ Մովսես, որ յամենայն փրկե իմում հաւաքարիմ է. Բերան ի բերան խօսեցայց ընդ նմա, երեսօք եւ ոչ առակօք. եւ գփառուն Տեառն երես»<sup>1</sup>: Տերը երես առ երես, առանց այլաբանության՝ «ոչ առակօք», խոսում է միայն կարարյալ հոգիաբանկների՝ իր փրկե հաղափարիմների հետ: Սուրբ Գրքում բազմաթիվ անգամ հիշատակվում է այս մասին. «Եւ ասեմ, Քաւ լիցի, Տէր. նոքա ասեն ցիս, Ո՛հ ապաքէն առակ է այդ որ ասից»<sup>2</sup>: Իսկ Նոր Կտակարանում Աստված ուղղակի բացատրում է նաև առակով խոսելու պարճառը. «Եւ մարտցեալ աշակերպքն ասեն ցնա, Ընդէ՛ր առակօք խօսիս ընդ նոսա: Նա պարասխանի եր եւ ասէ ցնոսա, Քանզի ձեզ փրկեալ է գիպել գիտքնոյս արքայութեան երկնից, եւ նոցա չէ փրկեալ: Զի ոյր գուցէ՝ փացի նմա եւ յաւելցի, եւ ոյր ոչն գուցէ՝ եւ գոքս ունիցին բարձցի ի նմանէ: Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի փեսանեն եւ ոչ փեսանեն, եւ յսեն եւ ոչ առնուն ի միպս: Եւ կարարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ որ ասէ, Լսելով լուիջիք, եւ մի՛ իմասջիք, եւ փեսանելով փեսջիք եւ մի՛ փեսջիք»<sup>3</sup>:

Երբ որևէ հեղափոխական անհատ է Սուրբ Գրքի՝ այլաբանորեն կամ առակով (որ նույն բանն է) մարտցված խոսքի խորհրդական բնույթը, անխուսափելիորեն դրան փոխվում է անառակ (անխորհուրդ, անիմաստ, անմիտ) մեկնություն: Սուրբ Գրքի խորհուրդների ճիշտ ընկալման համար, առաքյալներից սկսյալ՝ երկար դարերի ընթացքում սրբադավան է հարուստ աստվածաբանական-մեկնողական գրականություն, որի մեջ իրենց դերով ու հեղափոխական-աստվածաբանական-մեկնողական գրականության վրա ունեցած ազդեցությամբ առանձնանում են եկեղեցու առաջին հայր հռչակված, Պողոս առաքյալի աշակերպ Դիոնիսեոս

1 Թ. Ժ. 7, 8:

2 Եզ. Ի. 49:

3 Մկր. Ժ. 10-14:

Արեւապագացու «Երկնային քահանայապետություն» և «Աստվածային անունների մասին» աշխատությունները:

**Արեւապագացու ուսմունքի՝ նշանական աստվածաբանության հիմնական խնդիրների՝** Աստված և աստվածացման իմացության հիմքը զգայական նշանակներն (խորհուրդներ, խորհրդանշաններ) ու իմացություններն (զաղափարներ) են: «Երկնային քահանայապետության» առաջին գլխում, հետևելով Պողոս առաքյալին, Արեւապագացին բացատրում է աներևույթն ու անբեկանելին արևմտաօրիոց (խորհրդանշաններով) մեկնելու պարճառը. «1, 3. Եւ որովհետեւ մեր միտքը չի կարող այլ կերպ ձգտել երկնային քահանայապետությունների այն աննյութ նմանություններին և արևիքներին, ապա նրանց կմտնանք նյութական [օրինակներին] առաջնորդությամբ և երեսացող գեղեցկությունները կհամարենք աներևույթ վայելչության կերպարանքներ (Նմնդ. Հոռվմ. Ա, 20), իսկ զգայական անուշահոտությունները՝ Հոգու իմացական բաշխման ձևեր, նյութական լույսը՝ աննյութ լուսավորության պարկեր»<sup>4</sup>:

Ե դարից սկսած՝ հայ մարեմագիրները ոչ միայն թարգմանում էին օտարալեզու աստվածաբանական գրականությունը, այլև իրենք էին գրում մեկնաբանական-աստվածաբանական աշխատություններ, որոնք վկայում են, որ դեռևս առաջին հայ մարեմագիրներն ու թարգմանիչները Աստված ճանաչողության և սուրբգրային խոսքի իմացության մեջ հստակ գիտակցել են խորհրդանշանի դերն ու կարևորությունը<sup>5</sup>:

Նայ աստվածաբանական մտքի մեջ խորհրդանշանի մեկնության և արևմտական ընդհանրացման առումով նոր ու ինքնարիտ ղրսեւորումներ են խորանների մեկնությունները: Արարքին ձեռի նմանության պարճառով խորաններ կոչված խորանապարկերները, որոնցով սկսվում են ավերարանները, հայ մեկնիչների կողմից «...դիտվում են իբրև «նախադրություն փառագարդ և աստուածապայծառ մարտոր գանձուցն» (իմա՝ ավերարանների խոսք): Ներուաբար խորանապարկերները, ըստ մեկնությունների, իրենց գույներով, գարդամոտիվներով, խորհուրդներով (սիմվոլներով), հոգու վրա զգայական ներգործումով կազմում են ավերարանագրքի բաղկացուցիչ մասը, ծառայում են իբրև նախադրու, իբրև նախագիտելիք, իբրև հոգեբնախոսական ներշնչում, ավերարանական «սրբազնագրությունների» (Դիոնիսիոս Արեւապագացի) խորքերը մտնելու համար»<sup>6</sup>:

Խորանների մեկնիչները՝ Սյրեփանոս Սյունեցին, (Ը դար ), Ներսես Շնորհալին (ԺԲ դար), Գրիգոր Տաթևացին (ԺԴ-ԺԵ դարեր), Գրիգոր Խլաթեցին (ԺԵ դար) և այլք, մեկնում են խորաններում պարկերված բոլոր առարկաները՝ սյուներ, խոյակներ, հավքեր, ծառեր, ծաղիկներ, գույներ և այլն, որոնք բոլորն էլ խոր խորհուրդներ ունեն և, ինչպես Ներսես Շնորհալին է ասում, «...ոչ վայրապար և առանց խորհրդոյ են նկարեալ զծաղկաձև երանգաւ գոյնագոյն երանգոց խորհրդական խորանացս արասանց հարքն առաջին, այլ հոգեշարժ իմաստիք արևեալ զասացեալս՝ յարինեցին զայս և հեղին կրկին աչաց բանա-

4 Դիոնիսիոս Արեւապագացի, Երկնային քահանայապետություն: Այս և հաջորդ հոդումները՝ ըստ Վ. Ղազարյանի թարգմանության ձեռագրի:

5 Այս մասին մանրամասն փննհայտ իրականացրել է Վ. Ղազարյանը: Գրքեր և ժամանակ, 1995: Գրքերի արդ. Մարգարեան, Նայելեղեցոյ աստուածաբանութիւնը ըստ շարականների, Կոնստանդնուպոլիս, 2003: Ն. Ավդալյան, Հոգեւոր երգի խորհրդաբանությունը հայ մարեմագրության մեջ, «Էջմիածին», 2010, թ. Ե:

6 «Մեկնութիւնք խորանաց», Ներագոյություն և բնագրեր, աշխարհափորձամբ՝ Վ. Ն. Ղազարյանի, Ս. Էջմիածին, 2004, էջ 16:

կան արանց առաջի երևելի հայեցումովս ընդ Կրեանելի նիւթիս առաջնորդեալս յիմանալի գեղեցկութիւն վայելչութեան, որպէս եւ ասէ Պատուս, եթէ աներևոյթը Աստուծոյ երևելի արարածովքս իմացեալ Կրեանին»<sup>7</sup>:

Խորանների առաջին մեկնիչ Սյունեցի Սյունեցին (Ը դար), որ նաև Դիոնիսիոս Արեոպագացու սրբադասությունների առաջին թարգմանիչն էր եւ որպէս մեկնիչ՝ նրա հետևորդը, իր մեկնության մեջ փայլաւ է խորանների խորհրդանշանների բացատրությունները եւ մեկնում դրանց հոգևոր խորհուրդները: Այդ խորհրդանշաններն արտահայտվում են գույներով (կարմիր, սև, կապույտ, ոսկեգույն), սյուներով, կամարներով, հավթերով (սիւրամարգ, աքաղաղ, կաքավ, աղավնի), ծառերով (արմավենի, նռնենի), բույսերով (շուշան), ամպով եւ այլն: Ներագա մեկնիչների՝ հարկապէս Ներսէս Շնորհալու եւ Գրիգոր Տաթևացու մեկնությունները թեև ավելի ամբողջական են, բայց հետաքրքիր է մի քանի օրինակով Կրեանել, թէ Սյունեցին ինչպէս էր մեկնում խորհրդանշանները, որոնք «...համագոյգ բանիւք մի առ մի շաղաշարեալ զընթերակայիցն հոլովսն արտակալեալ, որ վասն Քրիստոսի են վկայութեան բանք»<sup>8</sup>:

**Սյուն (Ժիրանագույն)** - «Միւր ծիրանիք գիաստարութիւն էական աթոռոյն արարաբոյ փարերց»:

**Սիրամարգ** - «Նաբն ի վերայ կամարացն սիրամարգք զՆին արինաց զմարգարէական եւ զընթերակական արարաբոյ եկեղեցոյ մարմնաւոր պաճուճիւք չխաւսելով ի նոր եկեղեցիս»:

**Գույներ** - «Ապա երկրորդ խորանն համապարիւ նմին, չորք դեղաւք զարդարեալ, զի ի ներքս ունելով *զսեռադեղսն*, զիսկական գոյութիւնն ցուցանէ, եւ նրբագոյն վասն առաջին Կրեանաց, յորայ վերայ *զկարմիրն* կամարածեալ վասն արեան գոհիցն պարարագաց՝ ի խնդիր Աստուծոյ երազացն: Իսկ միջոցն *կապույտակ* նկարէն երփնեալ վասն մարմնաւոր գնացիւք զհոգևորն կարգելով: Իսկ *ոսկեգոյն* կամարն զբահանայականն ունի զխորհուրդ ի միջի կացեալ: Իսկ *կարմիրն զինեզոյն*՝ վասն Մելքիսեղեկի բերելով զխորհուրդս ի դէմս Քրիստոսի: Իսկ վերնայարկ *սեռան* լայնաբարած փարածեալ գիանալքն, իբրեւ ամպով ծածկեալ, ունի զխորհուրդն աստուածային Կրեանութեանն եկեալ»:

**Շուշան** - «Իսկ հինգերորդ խորանն գնոյնս բերէ զխորհուրդս. սպուրն պակասի, եւ կարմիրն պայծառանայ, եւ շուշանն ծաղկի, քանզի խաչն մերձեցաւ, եւ գուշակք յարութեան հասին, յայտնեալ Քրիստոսի արեամբն փրկութիւն հեթանոսաց»<sup>9</sup>:

Սյունեցու մեկնությունները կարեւոր են այն առումով, որ մինչև Նարեկացին խորանների այլ մեկնություններ վկայված չեն, եւ Նարեկացին այս եւ մյուս խորհրդանշանները նույն խորհուրդներով առաջինն է գործածել Կաղերգության մեջ:

Թարգմանական եւ հայ հեղինակների սրբադաս հարուստ աստվածաբանական-մեկնաբանական գրականության մեջ հայ փաղերգության հոգևոր խորհրդանշանի ձևավորման, համակարգման ու զարգացման գործում թերեւս առանցքային նշանակություն են ունեցել «Երգ երգոցը» եւ սրա մեկնությունները<sup>10</sup>: Դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

7 Անդ, էջ 294:

8 Անդ, էջ 255:

9 Անդ, էջ 256-257:

10 Արդեն Ե դարում հայերեն էին թարգմանվել Գրիգոր Նյուսացու եւ Տիմոթիոս Բոսորացու մեկնությունները:

ա. Այս գրքի ամբողջական վերնագիրն է «Երգ երգոց, որ է օրհնությունն օրհնութեանց», այսինքն՝ երգերի երգն է և օրհնությունների օրհնությունը: Վերնագրային այս բնութագրումը հասկանալի է գրքի առնվազն երկու էական և սկզբունքային հատկանիշ. նախ՝ այն վեր է դասվում մյուս մարգարեական երգերից, ինչը աստվածաբանական գրականության մեջ վկայվել է բազմիցս: Ս. Աթանաս Աղեքսանդրացին Աստվածաշնչի «Նամակապտոմի» մեջ գրում է. «Երգ երգոց» է անուանում նրա համար, որ գալիս է միւս երգերից յետոյ, և այս երգից յետոյ չի կարելի սպասել այլ երգ... Բոլոր աստվածային Գրքերը մարգարեանում են Բանի առ մեզ խոնարհություն և մարմնով յայրություն մասին... Բոլոր մարգարեություններն, ըստ էության, երգեր են, իսկ «Երգ երգոցը» որպես թե՛ այլևս չի մարգարեանում և կանխատեսում, այլ ցոյց է փայլա Նրան, Ում մասին ուրիշները մարգարեացել էին՝ որպես եկած և վերցրած մարդկային մարմինը»<sup>11</sup>: Երկրորդ՝ քանզի «օրհնությունն օրհնութեանց» է, աստվածային նշանական-այլաբանական խոսքի կարարյալ արտահայտություն է. «Նրա մեջ ամեն ինչ սկզբից մինչև վերջ գրում է խորհրդաբար, առեղծուածային այլաբանությամբ. նրա մեջ ամփոփում է դաւանական իմաստները ոչ թե՛ փառի մեջ են, այլ խորապես ծածկուած են նրա փակ... Ահա թե՛ ինչու միայն կարարեալները կարող են կարդալ այս գիրքը, սակայն նրանք էլ կարդալիս պէտք է նկատի ունենան այլաբանությունը, որպէսզի անիմաստների փոփոխութեամբ չծաղրվի նրա մեջ շարադրուածը»<sup>12</sup>:

բ. Քրիստոնեական հոգևոր գրականության համար (տվյալ դեպքում նկատի ունենք չափազանց խոսքը) ինչպես ներքին-բովանդակային, այնպես էլ արտաքին-ձևական առումով «Երգ երգոցը» (նաև՝ Սաղմոսները) բանաստեղծական բարձր արվեստով, գաղափարական-դավանական ուղղվածությամբ, խորհրդական-այլաբանական խոսքի անկրկնելի բնույթով եղել է ներշնչանքի անփոխարինելի ու անսպառ աղբյուր:

Ղեկնու է դարձում հայերեն էր թարգմանվել «Երգ երգոցի» Գրիգոր Նյուսացու մեկնությունը, որ փառերգության հոգևոր խորհրդանշանի ձևավորման վրա ունեցել է անուրանալի ազդեցություն: Պետք է ենթադրել, որ այդ կարգում էր նաև Տիպոդիպոս Բոսսրացու մեկնության հայերեն թարգմանությունը, սակայն Գրիգոր Նարեկացին իր մեկնության մեջ հիշարարում է միայն Գրիգոր Նյուսացուն: «Երգ երգոցի» նկատմամբ հետաքրքրությունն այնքան մեծ է եղել, որ հետագա դարերում այն մեկնել են նաև Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին, Գրիգոր Տաթևացին, Խաչատուր Էրզրումցին, Նովիաննես Վարդապետը, Նակոբ Կարնեցին և այլք: Սակայն փառերգության խորհրդանշանի ձևավորման ու հետագա հորվույթի փնտրանքից ժամանակագրական առումով հատկապես կարևորվում են Տիպոդիպոս Բոսսրացու, Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Նարեկացու, մասամբ նաև՝ Վարդան Արևելցու և Գրիգոր Տաթևացու մեկնությունները:

Թվարկված մեկնությունների մեջ Գրիգոր Նարեկացու մեկնության նշանակությունը բացառիկ էր նաև հետևյալ առումներով. նախ՝ դա փաստորեն «Երգ երգոցի» առաջին հայերեն մեկնությունն էր, երկրորդ՝ Գրիգոր Նարեկացին նշանական աստվածաբանության կարարյալ իմացությամբ այդ մեկնությունով դարձավ հայ հոգևոր բանաստեղծության խորհրդաբանության (խորհրդանշական խոսքի) հիմնադիր-փեսաբանը, և ապա՝ ձևավորեց գանձարանային փառի խորհրդանշանի համակարգը՝ մեզանում դառնալով առաջին

11 «Երգ երգոց» հանդերձ մեկնությամբ նախնեաց», Եր., 1993, էջ 10:

12 Անդ, էջ 9-10:

հոգևոր քաղերի հեղինակը: Մակայն հայ հեղափոխություններին այս գործը զարմանալիորեն հեղափոխել է հիմնականում երկու փասակերից. առաջին՝ արդյո՞ք մեկնության հեղինակն ու բարաստվողը Նարեկացին նույն անձինք են, և երկրորդ՝ «Երգ երգոցը» աշխարհի՞կ, թե՛ հոգևոր բովանդակությամբ երգ է, և Գրիգոր Նարեկացու մոտեցումն այս հարցում:

1943 թ. Վիեննայի միսիոնարյան հայերից Ն. Ալինյանն իր մի գեղեցկությամբ՝ «Մէկ, թե՛ երկու Գրիգոր Նարեկացի», փասակեր հայտնեց, թե Նարեկացիները երկուսն են՝ նույն Նարեկ գյուղից. մեկը ամուսնացյալ քահանա է, որն էլ մեկնության հեղինակն է, իսկ մյուսը՝ բանաստեղծը<sup>13</sup>: Ներագայում այս փասակերը պաշտպանեց և առաջ քաշեց նույն միաբանության հայերից Կ. Բիպարյանը, սակայն այն քննության չհիմնացավ<sup>14</sup>: Նման վարկածի համար հիմք հանդիսացած թյուրմեթոդները հանգամանակից կերպով բնակն ու պարզաբանեց հարկապես Դ. Խաչատրյանը, և այս խառնաշփոթը պարզապես գիտական լուծում ստացավ<sup>15</sup>:

Երկրորդ փասակերին նույնպես գրականագիտության մեջ շարքի են անդրադարձել, իսկ անդրադառնալու դեպքում էլ գրեթե բոլորը համակարծիք են, որ նախ՝ «Երգ երգոցը» ոչ թե հոգևոր ստեղծագործություն է, այլ «անցյալում ստեղծված սիրային լիրիկայի ամենագեղեցիկ նմուշներից մեկը»<sup>16</sup>, և ապա՝ Գրիգոր Նարեկացին (ինչպես և մյուս մեկնիչները) բռնագոյնի կերպով փորձել է «աշխարհիկ» երգին հոգևոր բովանդակություն վերագրել: Արդարացի այն է, որ հեղափոխությունից ոչ ոք իր փասակերը չի հիմնավորել վերլուծությամբ: Դրանք ընդամենը «Երգ երգոցի» բովանդակության արտաքին տարածությունից բխած եզրակացություններ են: Ընդ որում՝ առ այսօր հրապարակի վրա չկա Նարեկացու մեկնության վերաբերյալ որևէ ուսումնասիրություն, իսկ այս չհիմնավորված փասակերը կրկնվում է պարբերաբար:

Նայ գրականագիտության մեջ, ինչպես շարքի հարցերում, այս փասակերի ձևավորման մեջ նույնպես վճռորոշ է եղել Մ.Աբեղյանի մոտեցումը: Խոսելով Աստվածաշնչի պատմի աշխարհայնության մասին՝ նա գրում է. «Բրիտանականության առաջ արդեն Փիլոն Երբայեցին (ծն. մոտ 30թ. մ.թ.ա., մեռ. մոտ 45 թ. մ.թ.) նույն աշխարհական բացատրությունը գործադրել էր Նին Կրակարանի վրա: Նույնպես շարունակում են վարուն և քրիստոնեաները, Մ. Գրքի պարզ խօսքերի փակ վերացական գաղափարներ որոնելով (ընդգծումը՝ Ն.Ա.), նրանց մեջ կանխատեսություններ գտնելով, կամ հենց լույս, - դժուարություններից խուսափելու համար, որպեսզի հաղթահարեն կրոնական զգացմունքները չվիրառնեն, - այդ գրքի բովանդակությունը ժամանակակից հասկացության ու հայեացքների համեմատ դարձնելու նպատակով: Այլաբանական մեկնության հետ միաժամանակ գործադրում էին նաև մթին, դժուար հասկանալի կյանքների բառական բացատրությունը: Ներագայում, սակայն, շարք սիրելի է դառնում *այլաբանական մեկնությունը*, և այդ անհրաժեշտ է համարում յաճախ նույնիսկ անձնական նրբամտությունը ցույց տալու համար»<sup>17</sup>:

Այսպիսով առաջինը բառացի ընկալելու, նրա խորհրդարանությունը անփեսելու մոտեցումը ընդօրինակելի դարձավ հեղափոխ գրեթե բոլոր հեղափոխությունների համար:

13 Տե՛ս «Ազգայնագիտություն», Բեյրութ, 1943, թ. 27, էջ 3-4. «Նանդա ամսօրեայ», 1949, էջ 120-121:

14 Տե՛ս «Բազմալեզու», 1961, էջ 1-10:

15 **Պողոս Խաչատրյան**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 67-81:

16 **Մ.Մկրչյան**, Գրիգոր Նարեկացի, Ե., 1955, էջ 128:

17 **Մ.Աբեղյան**, Նայի գրականության պատմություն, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 96-97:

Գրիգոր Նարեկացու սրբազանության լեզվածական հարցերին նվիրված ուսումնասիրության հեղինակը, անդրադառնալով այն հանգամանքին, որ Գրիգոր Նարեկացին առաջին անգամ մերժում է Վասպուրականի Գուրգեն Արծրունի թագավորի խնդրանքը՝ գրել «Երգ երգոցի» մեկնություն, հանգում է բոլորովին անհիմն եզրակացության. «Նարեկացին Գուրգեն թագավորի խնդիրը առաջին անգամ մերժում է այն պարզապես, որ ինքը այդ «Երգի» բովանդակությունը հասկանում էր իր բուն նշանակությամբ. իսկ նրանից պահանջում են փալ մեկնություն, անշուշտ, կրոնական ըմբռնումով, և ուս հարկադրված մեկնում է, բայց զգալով, որ իր մեկնությունները ճիշդ չեն, որ նրանք չեն համապատասխանում «Երգ երգոցի» բովանդակությանը, ուս ճարահապրյալ զանգալովում է «Երգ երգոցի» հայերեն թարգմանությունից»<sup>18</sup>:

Անովազն փաօրինակ է այս եզրակացությունը, քանզի Գրիգոր Նարեկացու մեկնության մեջ ակնարկ իսկ չկա, որ նա գիրքն հասկացել է այլ նշանակությամբ (ըստ Վ. Առաքելյանի՝ «բուն», իմա՝ աշխարհիկ նշանակությամբ)։ Ավելին՝ Գրիգոր Նարեկացին իր ուրախությունն է հայտնում թագավորին՝ այս մտահղացման համար. «Արդ նախ առաջին՝ խնդացի ընդ այս, որ այսպիսի միտք երևեցուցեր առ ի քննել զգիրս, և հոգ փանել ուսմանց, որ է գուշակ երկիրի Տեառն, և օտարանալոյ ի պիղծ հոգուց և ի վայրապար քննութեանց և ի մեղսասէր բարուց»<sup>19</sup>:

Գրիգոր Նարեկացին թեև ի վերջո պարասխանաբարությամբ ու մեծ երկյուղածությամբ հանձն է առնում գրել մեկնություն, բայց նաև բացարարում է իր մեջ ծնված կասկածների պարզադրությունը. «Զի եթե Նիսացին Գրիգոր, որ կարարեալ վարդապետ էր և հոգիարանակ ի բուն կարարման մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գրանի, ո՞րչափ ևս առաւել էս, որ ամենայնիւ փգէր եմ ի Նոգույն շնորհաց, որ կարացից հերելել մտացն ասացելոց ի սողոմնեան հոգույն։ Մանաւանդ զի չէ վոքք դարապարտութիւն և պարիժք՝ զբանս սրբոց գրոց օտար մեկնութեամբք աղաւաղեալ՝ վասն ոչ փգէր երևելոյ, և փառամոլ հպարտութեամբ՝ զոչէսն իբրեւ զճշմարիտ ցուցանել։ Բայց զի հրաման ունիմք հնազանդ լինել թագաւորաց հրամանաց, յանդգնիմ ասել զիմ փկար մտացս փկար հասողութիւնն, յուսացեալ ի Նոգին սուրբ, զմտայն կարարելով հրաման, որ ասաց, թէ հպարակ կացէք թագաւորաց»<sup>20</sup>։ Քրիստոնյա հեղինակի այս համեմատությունը ոչ թե ապացույց է այն բանի, որ նա ստիպված էր իր համոզմունքներին հակառակ մեկնություն գրել, այլ որ ամենայն լքությամբ գիտակցում էր հարցի կարևորությունը և ուներ պարասխանաբարության մեծ զգացում։

Իսկ ինչ վերաբերում է «ճարահապրյալ զանգալովելուն»՝ ուղղակի պետք է զարմանք հայտնել, որովհետև Նարեկացին, հանդիպելով թարգմանությամբ պայմանավորված որոշ խնասքային նրբություններ ճշգրիտ հաղորդելու դժվարությունների, փալիս է դրա բացարարությունը, ինչպես որ կաներ յուրաքանչյուր հմուտ, բարեխիղճ և, առավել ևս, հավաքավոր մարդ. «Արդ եթե բանք յիրերացս ոչ յարին գրոց մարգարեականաց, դու մի՛ ամենեւին զհաւասարին պահանջեր։ Զի ասէ երանելի վարդապետն փիեզերաց Յոհան, թէ Յեբբայեցոց լեզուէ ի հելլենացի թարգմանեալ, և ի հելլենացոյն չկարէ զբանն բովանդակ բերել. մանաւանդ որ առ մեզ՝ որ ի յայն լեզուէն, կամ յասորոյն թարգմանեալ՝ մոայլ առեալ է ի հայ լեզու։

18 Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 35:

19 Գր. Նարեկացի, Մարենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 271:

20 Անդ:

Ձևոյն և Նիսացին Գրիգոր ասէ ի սոյն մեկնութեան»<sup>21</sup>: Նոյն հարվածի մեկնության ժամանակ, ինչպես րեանում ենք, համանման դժվարություններ ունեցել են մեծագույն աստվածաբաններ Նովիանոս Ոսկեբերանն ու Գրիգոր Նիսացին, բայց ոչ մեկի մարմով չի անցել նրանց կեղծիքի մեջ մեղադրել, մանավանդ, որ բացառությունը խիստ գիտական է և համոզիչ:

Վ. Առաքելյանի րեսակերը «անհավանական» չի համարում նաև Վ. Նալբանդյանը<sup>22</sup>: Գր. Նարեկացու սրբազանության լավագույն հեղափոխություններից մեկը՝ Պ. Խաչապրյանը, թեև փաստարկված է համոզիչ կերպով ապացուցում է Նարեկացու՝ «Երգի» մեկնությունից նախապես հրաժարվելու որոշման՝ վերոշյալ բացառության սնանկությունը, սակայն պաշտպանում է «Երգ երգոցը» աշխարհիկ սրբազանություն համարողների րեսակերը. «Շարունակ կասկածի րեղիք էր րալիս և անհրաժեշտություն *զգացվում զգայական սիրտ բոցավառ արրահայրություն հանդիսացող* «Երգ երգոցը»՝ հաճախ արհեստական ու բռնագրոսիկ ճիգերով հաշրեցնել ու ներդաշն դարձնել Սուրբ Գրքի բազմաբնույթ համակարգին: Եւ դա հնարավոր չէր իրականացնել այլ կերպ, քան այն դիտել որպես այլաբանություն (*ընդգծումը՝ Ն.Ա.*)»<sup>23</sup>:

Շարերն էլ այս հարցին անդրադառնալիս ուղղակի բավարարվել են հպանցիկ մի քանի դիտողություններով՝ պարզապես կրկնելով ավանդույթի արժեք սրացած րեսակերները: Նման մոտեցումներն, անշուշտ, մեծ չափով պայմանավորված էին նաև ժամանակի իշխող գաղափարական-մեթոդաբանական կաշկանդումներով:

Վերոշյալ րեսակերները գնահատելիս հարկ է ուշադրություն դարձնել առնվազն երկու հանգամանքի: Նախ՝ մեղմ ասած՝ անլուրջ մոտեցում է վերագրվում «Աստվածաշունչ» մալյանի հեղինակներին ու կազմողներին, որոնք, իբր, առանց հասկանալու և պարահարա Աստծո խոսքի մալյանում րեղ են հարկացրել աշխարհիկ մի երգի: Ավելին՝ այդ երգը գերադասել են մյուս բոլոր երգերից՝ այն անվանելով «Երգ երգեց, որ է օրհնության օրհնությանց»: Ճիշտ է նկատված, թե այս դեպքում ինչպե՞ս պետք է «ճշմարիտ իսրայելցին այդպիսի գիրքը վեր դասեր սաղմոսներից, Մովսեսի երգից, մարգարեների հոգեշունչ խոսքերից»<sup>24</sup>:

Երկրորդ՝ առանց որևէ վերլուծության ու հիմնավորման՝ «Երգ երգոցը» համարվել է սիրային քնարերգության նմուշ՝ հիմք ընդունելով միայն արարաքին ընկալումը:

Ես նաև հարցի մյուս՝ ոչ պակաս կարևոր կողմը. ժողովրդին դեպի Աստված, դեպի հոգևոր կարարելություն առաջնորդող հրեական, այնուհետև՝ նաև քրիստոնեական եկեղեցին ինչպե՞ս էին նույն ժողովրդին մալուցում երկու անհաշրեղի՝ միևնույն ժամանակ հավարարիմ մնալով թե՛ Սուրբ Գրքի էությանն ու Աստծո պարվիրաններին, թե՛ պահպանելով եկեղեցու խորհուրդն ու հեղինակությունը: Մի՞թե եկեղեցու առաջնորդներն ու սպասավորները գիտակցաբար հարվածի րակ էին դրել նույն եկեղեցու հեղինակության և լիերության հարցը և անպրադ, բռնագրոսիկ ջանքեր էին գործադրում՝ հեղափոխություն քառող երգը ներկայացնելով որպես Սուրբ Տոգուց քիսած աստվածային խոսք, «օրհնության օրհնությանց»:

Տոգուր րանասրեղծությանը (ընդհանրապես մշակույթին և հարկապես՝ Սուրբ

21 Անդ, էջ 282:

22 Տնն Վ. Նալբանդյան, Գրիգոր Նարեկացի, Եր. 1990, էջ 49:

23 Պողոս Խաչապրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս.Էջմիածին, 1996 թ., էջ 125:

24 «Երգ երգոց» հանդերձ մեկնությամբ նախնեաց, Եր., 1993, էջ 10:

Գրքին) չի կարելի մոտենալ՝ անտեսելով դրա հոգևոր բովանդակությունը, խոսքի նշանակալիկ-այլաբանական բնույթը, ասելիքի միաբնույթը, ստեղծման ժամանակաշրջանը, հեղինակի առաջադրած խնդիրները, աշխարհայացքը, համոզմունքները, գաղափարական-դավանաբանական-հոգևոր-մշակութային այն միջավայրը, որի հարազատ ծնունդը, կրողն ու արտահայտիչն էր վրլյալ հեղինակը: Եւ պարահական չէ, որ այս ամենի անտեսման հետևանքով պետք է ոչ միայն չգիտակցվեր Սուրբ Գրքի ամենախորհրդական-նշանական գրքերից մեկի բուն իմաստը, այլև որևէ լուրջ արժեք չպետք է վերագրվեր Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնությանը՝ ոչ միայն որպես ինքնուրույն մեկնաբանական աշխատության, այլև չպետք է գիտակցվեր ու գնահատվեր նրա ազդեցությունը հայ չափածոյի, հայերկապես՝ պոեզիայի վրա:

Նայ գրականագիտության մեջ նաև հետազոտում չի կարելուրվել է Ս.Գրքի այլաբանական բնույթը, գործնականում գրեթե միշտ իշխել է այլաբանության բառացի ընկալման մեթոդը, միշտ անտեսվել են մեկնաբանական աշխատությունները: Նման մոտեցման դեպքում ոչ միայն անտեսվել են Աստվածաշունչ մատյանի էությունն ու բազմաթիվ հեղինակավոր մեկնիչների աշխատությունները, այլև՝ «Երգ երգոցի» բնագիրը: Եւ առնվազն փարօքինակ է, որ պառացի ընկալման կողմնակիցները թեկուզ նման մոտեցմամբ քիչ թե շատ լուրջ վերլուծություն չեն կատարել: Այլապես ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ «Երգ երգոցը» գնահատվել է որպես «անցյալում ստեղծված սիրային լիրիկայի ամենագեղեցիկ նմուշներից մեկը» կամ «զգայական սիրո բոցավառ արտահայտություն», իսկ Մ. Աբեղյանը, առանց որևէ վերլուծության ու հիմնավորման, աստվածաբան-մեկնիչներին համարում է «*պարզ խոսքերի փակ վերացական գաղափարներ*» որոնողներ:

Սուրբ Գրքի պատմի խորհրդաբանության բառացի ընկալումը եթե ոչ ընդունելի, ապա հայեցակարգային փոխակերպից գուցե և բացատրելի լիներ, եթե նման մոտեցմամբ որևէ վերլուծություն փնտրվեր պարբերական պրամաբանության սահմաններում: «Երգ երգոցը» սիրային բնաբերության արտահայտություն համարողները ինչպե՞ս կբացատրեն հետևյալ նախադասությունները, եթե «... պառացի ընկալման դեպքում անմիջապես ծառանում են մի շարք անլուծելի հակասություններ...», «Երգ երգեցի» Փեսան միաժամանակ հովի է (Ա 6, Զ2) և արքայ (Ա 3, Գ 11), արդեն իսկ սկզբից պարզում է, որ Փեսան սպիներներ ունի (Ա 1)... Նարսը մերթ հովուի է (Ա 7), մերթ այգու պահապան (Ա 5), մերթ՝ որպես այգու պահապան (Զ 7-8): Իրենց յարաբերություններում Փեսան ու Նարսը մերթ եղբայր ու քույր են (Գ 12), մերթ Փեսայ ու Նարս կամ ամուսիններ (Ա 14-16, Բ 6-7): Այնուհետև գործողություններում Նարսը և անչափահաս է (Ը 8), և կատարեալ (Զ 8), մերձ լինելով Սիրեցեայի հետ՝ Նարսը չգիտի Նրա փողը (Ա 6) և փնտրում է Նրան քաղաքի մութ փողոցներում (Գ 2-3) երեսադեմական կանանց խմբի մասնակցությամբ (Ե 8-17), որոնց պարերաբար փարօքինակ կերպով երգուցում է (Բ 7, Գ 5, Ե 8, Ը 4), քաղաքի պահապանները հանդիպում են նրան, զարկում և հանում են քողը (Ռ 7):

Այս հակասությունները, որոնք անլուծելի են պառացի ընկալման դեպքում, ինքնին ակնարկում են այլ բարձրագույն մեկնություն<sup>25</sup>:

Այդպիսիք են եկեղեցու հայրերի և մյուս նշանավոր աստվածաբանների մեկնությունները, որոնց թվում, անշուշտ, նաև Գրիգոր Նարեկացու մեկնությունը, որի համար պարտա-

25 «Երգ երգոց» հանդերձ մեկնությամբ նախնեաց», էջ 11:

կան ենք Վասպուրականի Գրիգոր Արծրունի թագավորին: Ինքնին հասկանալի է, որ նա Նաբեկացուն պարվիրել է գրել նման մի աշխարհաբայն պարծառով, որ կային հոգևոր խորհուրդ պարունակող այս գիրքը աշխարհիկ իմաստով ընկալող մարդիկ, և Նաբեկացու հիմնական խնդիրն էր գրքի ճիշտ մեկնությամբ փարարել այդ մարայնությունը: Սա միևնույն ժամանակ վկայությունն է այն իրողության, որ աշխարհիկ դասի հարկապես գրագետը հարվածի մեջ բոլորը չէ, որ, «Երգն» ընկալում էին աշխարհիկ իմաստով: Նաև ակնհայտ է, որ նման մի աշխարհաբայն կարող էին վստահել աստվածաբանական հիմնավոր գիրքիչքներ ունեցող, հեղինակավոր և այդ գործում նախանձախնդիր մարդու: Այս հանգամանքը մի անգամ էս բացառում է այն թյուր պեսակերը, թե Նաբեկացին, իր համոզմունքներին հակառակ, բռնագրոսիկ կերպով փորձել է «աշխարհիկ» երգին հոգևոր բովանդակություն վերագրել կամ «...հաճախ արհեստական ու բռնագրոսիկ ճիգերով հաշտեցնել ու ներդաշնակ դարձնել Սուրբ Գրքի բազմաբնույթ համակարգին» և այլն:

Մեկնության մեջ Գրիգոր Նաբեկացին, հերքելով Գրիգոր Նյուսացու և, ընդհանրապես, Սուրբ Գրքի մեկնությունների հիմնական սկզբունքին, մեկնում է «մարմնավոր իրերի» խորհուրդները, բանգի բոլոր իրերն ունեն խորհուրդներ՝ մարդուց ծածկված. «Ջի որպես ծնողք փոխառ»՝ զպարունական իրս ի բարեպետակ ամանի ծածկեն, զի ոռցա արարաբոյ փեսեալն ցանկալի թոյին քան գոր ի ներքս եղեալ գանձն, զի այնու հորդորեսցին և զգոշութեան պահպանութեան որ ի ներքս»<sup>26</sup>: Մեկնության բուն նպատակը «Երգի» ներսում եղած այս գանձերը («զպարունական իրս») բացահայտելն ու ընկալելի դարձնելն է:

Արևոպագացին թվարկում է Սուրբ Գրքում խորհուրդներ պարունակող պարկերների մի մեծ ցանկ, որոնք խորհրդանշում են «զերագույն աստվածային ծնունդը», և «Աստված իմացական նախախնամությունների» համար՝ բազում նշանակներ՝ մարդկանց, կենդանիների, բուսերի և բազմազան իրերի փեսքով, որոնք խորհրդաբար վկայում են սուրբգրային բոլոր խորհուրդների «...և Երգ երգոցի մարմնական նյութեղեն բազմաթիվ առումների մասին, և ինչքան ուրիշ՝ Աստծուն համարձակորեն ստեղծող սրբազան պարկերներ թաքուն բաները բացահայտում են՝ մեր առաջ դնելով ու բազմացնելով, բռնադարելով միեղենը և անբաժանելին, փայլավորելով և բազում կերպեր փայլով նրան, որ ոչ կերպ ունի, ոչ փայլ: Եթե մեկը կարողանա փեսնել ներսում թաքնված վայելչությունը, կգրնի ամեն փեսակ խորհրդական և աստվածային նմանություններ և կլցվի աստվածաբանական մեծ լույսով»<sup>27</sup>:

«Երգ երգոցի» մեջ Քրիստոս-Փեսայի և Նարս-Եկեղեցու այլաբանական գրույցի հոգևորավոր խորհուրդների և իմաստների ընկալման միջոցը նշված խորհրդանշանն է, որի նյութագրերումն էլ ճանապարհ է հարթում դեպի բարձրագույն նշանական մարքի հոգևոր խորհուրդները: «Մարմնավոր իրերի» զգայական ընկալումը ծառայում է երևույթի վերգայական ընկալմանը, «Քանի որ, - ինչպես հաստատում է Արևոպագացին, - անկախարանձանց համար մեծապես անհամապատասխան են այն բաները, ինչ որ անճանալի իմաստության հայրերը իրապես թաքնիմաստ օրինակների միջոցով համարձակվելով հայտնում են աստվածային, խորհրդական և պիղծերի համար անկոխ ճշմարտությունները: Ուստի շարերը զվարահեցին խոսքով արարահայրված աստվածային խորհուրդներին, քանի որ դրանք փեսնում ենք միայն այդ նշանակների հեթ զգայությունների գուգորդությամբ: Այնինչ

26 Գ. Նաբեկացի, Մարենագրությունը, Վենեիկ, 1840, էջ 273:

27 Դիոնիսիոս Արևոպագացի, Աստվածային անունների մասին, IX, 1:

դրանք պետք է ինքնին մերկացնել և փեսնել մերկ ու մաքուր [վիճակում], քանի որ այսպես փեսնելով կհասնենք Իր մեջ հորդացող կենաց աղբյուրին, փեսնելով այն ինքնին որպես մի իսկական գործություն պարզ, ինքնաշարժ, ինքնագործող, ինքնին չնվազող, այլ ամենայն գիտության գիտություն լինելով և միշտ իր միջոցով իրեն փեսնելով: Արդ պետք է մենք այս նույնը ցույց տանք նաև մյուսներին և հնարավորին չափ բացահայտենք Աստծու նշանակալի սրբազնաստվածության բոլոր կերպավորումները, քանի որ Նրանից դուրս ինչ որ կա՝ լի է անհավասարի և հորինված բանդազուշանքներով»<sup>28</sup>:

Գրիգոր Նարեկացին, մեկնության սկզբում դրսևորելով նշանական աստվածաբանության փայլուն խմացություն, նախ՝ բացատրում է, թե Սողոմոն ինչու է ընկրկել Տարսի ու Փեսայի օրինակը, քանզի «Երգի» սխալ ընկալման գայթակղությունն սկսվում է այդպիսի: Բրիսպոսի և սուրբ եկեղեցու խորհուրդներին հասու լինելու համար հարկավոր է ունենալ «հրեշտակային ու լուսավոր սիրտ», բայց քանի որ «...գայնալիս պարի կորուստը, և գայնալիս աջ կորացուցաբ, օհ առեալ յերկրորդն դիմեսցուք, և ի ձեռն մարմնաւորացս փեսցուք զհոգեւորսն, որպէս և պարմէ Սողոմոն՝ ընկալեալ զշնորհս հոգւոյն սրբոյ: Նա և սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին ընդ փեսայի, որ ազաւր լինի ի պիղծ խառնից, չէ օտար ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Բրիսպոս և եկեղեցի աւարտի, ըստ առաքելոյն, թէ «Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Բրիսպոս և եկեղեցի»։ վկայելով Սողոմոնի բանիցն»<sup>29</sup>:

Վկայակոչելով Փեսայի և Տարսի սուրբգրային նշանակները (նյութական մարմնավորումները՝ խորհրդանշանները) «ըստ առաքելոյն»՝ Նարեկացին նկարի ունի Պողոս առաքյալի այն խոսքը, թե «Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհեւր կնոջ իւրոյ, և եղիցին երկուքին ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Բրիսպոս և եկեղեցի»<sup>30</sup>: Իսկ Փեսայի խորհուրդի վերաբերյալ Բրիսպոսի խոսքը աշակերտներին որևէ կասկած չի թողնում. «Ասէ ցնոսա Յիսուս, Միթէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ, մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք, յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն »<sup>31</sup>: Տարսի խորհուրդը եւս կասկածի փողիք չի փայլաւ. «Տարսն եկեղեցի և ժողովուրդ կոչի»<sup>32</sup>:

Որպես մուրք՝ անհրաժեշտ բացատրություններից հետո Նարեկացին անցնում է բուն մեկնությանը: Թեև հաճախ բավարարվում է Գրիգոր Նյուսացու մեկնությունների համառոտ ներկայացմամբ և շարդեպքերում ընթերցողին ուղղակի խորհուրդ է փայլա դիմել Նյուսացու մեկնությանը, սակայն ներկայացնում է նաև իր մտքերն ու դատողությունները, իսկ Զ գլխից սկսած՝ մեկնությունն ամբողջությամբ Նարեկացուն է, քանի որ Նյուսացու հայերեն թարգմանությունն ավարտվում է Ե գլխով:

Գրիգոր Նարեկացին մեկնում կամ Նյուսացու մեկնությունից վկայում է 200-ից ավելի բառ-խորհրդանիշ կամ պարկեր խորհրդանիշ, որոնք ունեն 300-ից ավելի կիրառություն: Այս խորհրդանշաններից շատերը հանդիպում են Նարեկացու փաղերում և «Մարյանում»:

Սփորել՝ դրանց ցանկը այբբենական կարգով:

28 Անդ:

29 Գր. Նարեկացի, Մարենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 275:

30 Եփես. Ե, 31,32:

31 Մարթ. Թ., 15:

32 Գրիգոր Նարեկացի, Մարենագրութիւնք, էջ 281:

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p><b>Ա</b><br/>այգեստանի պահապան<br/>անուշ հուր<br/>/անուշահոսություն<br/>աղավնի<br/>աղավնու աչք<br/>անբառ<br/>աջը<br/>անդաստան,<br/>այծյամ<br/>աղավնի իմ<br/>անձրևներ<br/>այգի<br/>աղվես<br/>անսպաս<br/>աչքերն աղավնիներ<br/>ամենեվն գեղեցիկ ես<br/>առյուծների որջ<br/>աղբյուր /կնքված/<br/>աղբյուր պարսեզների<br/>ագոավ<br/>աչքեր<br/>առամներ<br/>առավուր<br/>արեգակ<br/>Ամինաբադի կառք,<br/>աչքերը /հարսի/<br/>աշտարակը Լիբանանի<br/>արմավենի<br/>արթնացնել սերը<br/>արծաթեղեն աշտարակներ<br/>աշտարակ</p> <p><b>Բ</b><br/>բլուրներ եւ լեռներ<br/>Բեթել<br/>բլուրը կնդրուկի<br/>բուրաստան<br/>բարձերի հարդարում<br/>Բեղմավուն</p> <p><b>Գ</b><br/>գեղեցիկ է եղբորորդիս<br/>գանավորակ,<br/>գերան<br/>գինի<br/>գեղեցիկ իմ<br/>գեղեցիկը կանանց մեջ<br/>Գաղասաղ<br/>գեղեցկացավ քայլքը քո<br/>կոշիկներով<br/>գլխի հյուսքերը<br/>գեղեցկացար</p> <p><b>Դ</b><br/>դուստր<br/>դեմքդ ցույց փուր<br/>դուստրեր Երուսաղեմի<br/>դուստր Նաղարի<br/>Դամասկոս դուռ<br/>Ե</p> <p><b>Ե</b><br/>եղբորորդի<br/>եղնիկ<br/>Երուսաղեմի դուստրերի<br/>սերը,</p> | <p>երկվորյակ<br/>եղայրներ<br/>Երուսաղեմ<br/>երկվորյակ ուլ<br/>Եսեբունի ծովակ<br/>երկուր<br/>եղևնափայր<br/><b>Զ</b><br/>զմուռս<br/>զմուռսի լեռ<br/>զմուռսուր ձեռքեր<br/><b>Է</b><br/>Էպելու ժամանակը<br/><b>Ը</b><br/>ընկուզենիների պարսեզ<br/><b>Թ</b><br/>թափված յուղ<br/>Թարսիսի ակեր<br/>թագուհիներ<br/>թագուհիներ վաթսուն<br/><b>Ի</b><br/>իմ մոր որդիները<br/>ինձերի լեռ<br/><b>Լ</b><br/>լեռներ եւ բլուրներ<br/>Լիբանանի մայրի/փայր<br/>լույս<br/>Լիբանանից հոսած<br/>կենդանի ջուր<br/>կարմիր լար<br/>լուսին<br/><b>Խ</b><br/>խնձոր<br/>խնձորենի,<br/>խոսքդ լսելի արա,<br/>խոսք<br/>խունկ /խնկալից փաշտ/<br/>խմեք<br/>խնկաբեր լեռներ,<br/><b>Ս</b><br/>ծրար<br/>ծաղիկ դաշտի<br/>ծաղիկներ<br/>ծխի խնկափուր սյուն<br/>ծիրանի<br/>թագավորի թագ գլխին<br/>ծաղկել<br/><b>Վ</b><br/>Վեդարի վրանը<br/>կարարյալ իմ<br/>կնդրուկ<br/>կարմիր լար<br/>կնդրուկի բլուրը<br/>կաթ<br/>կինամոն<br/>կերեք<br/>կարմիր<br/>կեփազյա ոսկի<br/>կոկորդ<br/>կնիք<br/><b>Ն</b><br/>համբույր<br/>համբուրել</p> | <p>հարս<br/>հովիվների վրաններ<br/>հրապարակ<br/>հղացողի փուրը /ինձ/<br/>Ներմոն<br/>հանդերձների հուրը<br/>հուրը հանդերձների<br/>հալվե<br/>հյուսիս<br/>հարավ<br/>հովվել<br/>հյուսքերը գլխի<br/>հեշտալի լինել<br/><b>Չ</b><br/>ձի /փարավունի կառքին<br/>լծված/<br/>ձախը<br/>ձայնը եղբորորդու<br/>ձմեռ<br/>ձեռքեր<br/><b>Ճ</b><br/>ճանաչիր անձդ<br/>ճերմակած<br/>Մ<br/>միջօրն -<br/>մայրի -<br/>մեքձավոր իմ -<br/>մորս փուրը<br/>մեղր<br/>մանրագորներ<br/>մարանի<br/><b>Յ</b><br/>յուղ<br/><b>Ն</b><br/>նարդոս<br/>նուռ /նուռն կեղև/<br/>նոնենի<br/>նոճի<br/>Նաղարի դուստր<br/><b>Շ</b><br/>շուշան հովարի<br/>շնչիր պարսեզում<br/>շրթունքները շուշան եւ<br/>շափյուղա<br/><b>Ո</b><br/>որմ<br/>ոքերը լվանալ<br/>որովայնը խռովել<br/>ոսկի կեփազյա<br/>ոսկյա<br/>որթափունկ<br/>ողկույզ<br/><b>Չ</b><br/>չիմացավ անձն իմ<br/><b>Պ</b><br/>պարավար<br/>պարիսպ<br/>պսակը արքայի<br/>պսակվել<br/>պարսեզ /գոցված/<br/>պարսեզների աղբյուր ,<br/>պրուտ /հին, նոր/</p> | <p>պարմուճանն հանել<br/>պահապան /<br/>պարիսպների/<br/>պարս<br/><b>Ջ</b><br/>ջուր<br/>ջրերի լիություն<br/><b>Բ</b><br/>ռունգներ<br/><b>Ս</b><br/>սրինք<br/>սենյակ /արքայի/<br/>սեւ եմ,<br/>սեւացած<br/>Մոդոմոնի խորան<br/>սրաշխ<br/>Մոդոմոնի գահ<br/>սպառազինյալներ<br/>սուսերավոր<br/>Մոդոմոն<br/>սերը Երուսաղեմի<br/>դուստրերի<br/>Միոն<br/>սրվեր<br/>Մանիր<br/>սպիտակ<br/>սեւ<br/>սոմնացի կին<br/>սենյակն ինձ հղացողի<br/><b>Վ</b><br/>վեմ<br/>վարս<br/>վահան<br/>վաթսուն թագուհիներ<br/><b>Տ</b><br/>տարարակի ծնոթներ<br/>տարարակի ձայնը<br/>տիվ<br/><b>Ց</b><br/>ցանկալի<br/><b>Ռ</b><br/>ուղղությունը<br/>ութսուն հարձեր եւ<br/>օրիորդներ<br/>ուլունքներ<br/>ուլ երկվորյակ<br/><b>Փ</b><br/>փարավունի կառք<br/>փշեր /շուշանը փշերի<br/>մեջ/<br/>փողոց<br/>թղուկյա փախարակ<br/><b>Ք</b><br/>քաղցրացավ պրուտը<br/>կոկորդիս մեջ<br/>քաղաք<br/>քույր,<br/>քառամանյակ<br/>քայլքը քո գեղեցկացավ<br/>կոծիկներով<br/><b>Օ</b><br/>օրիորդ<br/>օշարակ նոնենիների</p> |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|

\*\*\*

Նշանակալի աստվածաբանության բարձրագույն արտահայտության՝ «Երգ երգոցի» մեկնությունը Գրիգոր Նարեկացու գրական երախայրիքն էր, որը մեծապես ազդել է ապագա բանաստեղծի գեղագիտական հայացքների, տեսական ըմբռնումների եւ, հարկապես, տաղերի հոգեւոր խորհրդանշանի ու լեզվատնտեսական համակարգի ձեւավորման վրա: Գրիգոր Նարեկացուց մեզ հասած 21 տաղերն էլ, անխորիւր, նշանակալի՝ այլաբանական խոսքի արտահայտություններ են, որոնց միտք բանին, առանց հոգեւոր խորհրդանշանների խմաստների բացահայտման, մնում է անհասկանալի: Սա է պարզապէս, որ «Գանձարան» ժողովածուի համար գրված Նարեկացու՝ հոգեւոր բովանդակությամբ տաղերը որակվել են աշխարհիկ ստեղծագործություններ<sup>33</sup>: Պարկերը նույնն է նաեւ «Գանձարանի» մյուս հեղինակների՝ (Ներսէս Շնորհաւոր, Մխիթար Այրիվանեցու, Գրիգոր Խլաթեցու, Առաքել Բաղիշեցու) այլաբանորեն արտահայտված հոգեւոր բովանդակությամբ տաղերի հարցում: Նշված հեղինակների հոգեւոր տաղերում գործածված են բազմաթիւ սուրբգրային նշանակալի խորհրդանշաններ, որոնք ունեն հաստատուն, ճանաչված, ընդունված ու այլաբանորեն գիտակցված հոգեւոր խմաստներ, որոնք տաղերգուները գործածում են նշանակալի աստվածաբանության փայլուն խմացությամբ ու դրանց աղբյուր Սուրբ Գրքի նկարմամբ խորին հավատով ու երկյուղածությամբ:

Նկարագրել եւ ուսանելի է Արեւոպագացու տեսակետը նշանակալի խոսքի եւ այդ խոսքի խորհրդանշաններն անտեսողների մասին. «Եւ մի կարծես, թե ինքնին են ստեղծված երեւացող պարկերները, այլ շարքի գիտության համար առաջադրվել են անճանաչելի եւ անտեսանելի, որպէսզի սրբացած բաները հեշտությամբ չմարմնակեն պիղծերին, այլ միայն բացված լինեն Աստվածության մարմնի փափագողներին, որպէսզի մերժվեն սրբազան նշանակալի տեսնելու բոլոր մանկամիտ ցնորքները եւ մտքի պարզությամբ եւ տեսական գործության պարզաճոշությամբ հնարավոր լինի թափանցել դեպի նշանակալի պարզ, գերբնական եւ նախապէս հաստատված ճշմարտությունը»<sup>34</sup>:

Գանձարանային տաղերի արժեւորման կամ գնահատման հարցում հետազոտողների մոտեցումը սկզբունքորեն եղել է նույնը, ինչ, ընդհանրապէս, Սուր Գրքի եւ, հարկապէս, «Երգ երգոցի» դեպքում. անտեսվել է խոսքի նշանակալի-այլաբանական բնույթը, այդ խոսքը համարվել է «պարզ խոսք», որի վերլուծությունը, բնականաբար, պետք է հանգեցներ այլ՝ իրականությունից տարբեր արդյունքի:

Որպէս նմուշ բերենք խորհրդանշանի սխալ, ավելի ճիշտ՝ բառ-խորհրդանշանի բառացի ընկալման մեկ օրինակ եւ տեսնենք, թե բանաստեղծական մտաւիագման եւ դրա արդի մեկնաբանության մեջ ինչ տարբերություն կա: Նշանակալի խոսքը բառացի ընկալելու տեսակետից առավել արմատական տրամադրված հեղինակներին (Մ.Արեւոյան, Մ.Մկրչյան, Վ.Առաքելյան, Պ.Պողոսյան եւ ուրիշներ) թողնելով մի կողմ՝ անդրադառնանք Արշալույս Ղազինյանին, որը, ի տարբերություն նշված հեղինակների, Նարեկացու

33 Այս մասին առավել մանրամասն տես Ն. Ավրեցյան, Տաղերի ծիսական գործառնութի եւ գրական-գեղարվեստական արժեւորման հարցի շուրջ, «Էջմիածին», 2010, թ. Ը:

34 Գիտնական Արեւոպագացի, Աստվածային անունների մասին, IX, 1:

սպեղծագործությանը նվիրված իր մեկնադրության մեջ առանձին բաժին է հատկացրել բանաստեղծի քաղերի խորհրդաբանությանը՝ «Առարկայի խորհրդանշական երկակի իմաստը» վերնագրով<sup>35</sup>։ Այս բաժնում անդրադառնալով թե՛ Նարեկացու մեկնությանը, թե՛ քաղերին՝ հեղինակը հանգում է այն ճշմարիտ մտքին, որ «Բանաստեղծի համար բնութեան երևույթները, փեսանելի, զգայելի և շօշափելի ամեն ինչ մի փեսակ անօթներ են, որոնք կարող են պարունակել մարբեր ու զգացմունքներ և հասկանալի լինել միայն այլաբանօրեն։ Նարեկացին նիթեղ էն ամեն ինչ վերածում է խորհրդանիշի, ամեն ինչ երկարում, ընկալում է երկակի իմաստով»<sup>36</sup>։

Տեսական-մեթոդաբանական այս համոզիչ հաստատումից հետո թվում է՝ հեղինակը հանգելու է նաև խորհրդանշանի իմաստի բացահայտմանը, սակայն վերլուծության մակարդակում պարկերն արմատապես փոխվում է. «Ճաշակ քաղու համար, թե՛ ինչպես է Նարեկացին Երգ երգոցի պարզ փոխաբերությունը մեկնաբանում կրօնական հայեցակետից, բերեմ միայն մեկ օրինակ։ «Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովքաց» (Երգ, Բ, 1)։ «Ո՛ր զարմանալի իրս, որպես մարմինն փնտրեմք փեսան աշխարհում և անհայտն լինի քի պեսությունն էս, նոյնպես ջանայ ցուցանել զբարեգարությունն, զոր զգեցալ երկիր՝ ԳՔրիստոս ընդունելով. թե՛ որպես երկրի փեսություն ծաղկովք պսակեալ՝ զուարճացուցանե՛ զակն փեսողաց, և շուշան, որ ի հովիքս, այնպես որք որպես զդաշտս քաղածանեն զոգիս իրեանց ինձ ի բնակություն, և իբրև զհովիքս յորդին ինեւ, փթթին զինեւ առ ի ցնծություն անճառելի փեսողաց»<sup>37</sup>։

«Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովքաց» նախադասությունը համարելով ընդամենը պարզ փոխաբերություն՝ Ա. Ղազինյանը, փաստորեն, գործնականում հեղեղում է նախորդներին՝ այս այլաբանությունը համարելով «պարզ խոսք»։ Այնինչ, մեկնության ընթերցումը շարունակելով, բոլորովին այլ բացատրության ենթ հանդիպում. «Փշոցս՝ մեկնութեան չեն պէտք, յիշելով զառակս փշոցն և զորոմանն յաւերարանին, զոր Տէրն ոչ հրամայեաց հանել ի միջոյ ցորենոյն մինչև ի ժամանակն հնձոց, որ է կարարած աշխարհիս։ Այլ Երգ երգոցս կարեւոր և վայելուչ էս համարեցաւ զլինելն արդարոց ի մէջ մեղաւորաց։ Մի՛ զի առաւել էս պայծառ երեսեցին վարք արդարոցն, որ ընտրի պարտականն ի մէջ անարգաց։ Եւ երկրորդ՝ զի թերեւ դարձցին փուշին ի շուշան, փեսանելով զնոցայն պիպանություն»<sup>38</sup>։

Մեկնությունն այնքան պարզ է, որ կասկածի փուլիք բոլորովին չի թողնում. շուշանը խորհրդանշում է արդարներին՝ մեղավորների մեջ («զլինելն արդարոց ի մէջ մեղաւորաց»)։ Շուշանը, իբրև խորհրդանիշ, ինչպես փեսանք, նույն իմաստով է մեկնաբանում նաև Սյրեվանդադ Սյունեցին. «Եւ շուշանն ծաղկի, քանզի խաչն մերձեցաւ, և զուշակք յարութեան հասին, յայտնեալ Քրիստոսի արեամբն փրկություն հեթանոսաց»։

Շուշանը միջնադարյան քրիստոնեական մշակույթի մեջ ամենաարարածված խորհրդանշաններից է։ Խորանների գրեթե բոլոր մեկնիչները, շուշանը մեկնաբանելով որպես արդարի խորհրդանիշ, հաղորդում են նաև հավելյալ փոփոխություններ, որոնք ամփոփ ներկայացնում է Ներսես Շնորհալին. «Իսկ շուշանն երիս որակս ունի՝ սպիտակություն,

35 Ա. Ղազինյան, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 121-130։

36 Անդ, էջ 124։

37 Անդ, էջ 104։

38 Գրիգոր Նարեկացի, Մարենագրությունք, Վենետիկ, 1840, էջ 288-289։

ղեղնություն և կարմրություն: Սպիտակն զմաքրություն և զպարզություն նշանակէ, և  
ղեղնություն՝ զծովկալություն նոցա, և զկարմրություն՝ զերկս վաստակոցն, որ ի Յարութեան  
կարգն է: Է՛ ազգ շուշանի, որ ի ծովու բուսեալ վերանայ քան զջուրն, որպէս նահապետքն  
ի ծովու աշխարհիս վերացան հաւատովք և գործովք: Եւ է որ յանապարի և յոսրին  
ծաղկէ անձրեւով, որպէս հեթանոսք բնական գիտութեամբն միայն հաճոյացան Աստուծոյ,  
որպէս Կոռնելիոս և այլք բազումք, և է դարձեալ, որ բոցով արեգականն ծաղկէ, յորժամ  
այլքն թառամին, որպէս դասք անապատաւորացն ջերմութեամբ բոցոյ սիրոյն -Քրիստոսի  
զանազանս երևեցուցին հանդեսս, ուստի մեր թարշամիմք յալութեամբ և հեղգութեամբ<sup>39</sup>:

Եւ քանի որ շուշանը Նարեկացու կողմից խորապէս գիտակցված նշանակ է, հայրնի  
խորհուրդներով այն Կրիստոս ևս բանաստեղծի Կրիստոս:

Ահա նա՛, լեռան դիպարան,  
Շուշան հովրաց, ծաղիկ դաշտաց<sup>40</sup>:

Այս Կրիստոսի մեջ թե՛ բովանդակային, թե՛ լեզվատնական, թե՛ խորհրդաբանության առումով  
բացահայտ է «Երգ երգոցի» ազդեցությունը: Սակայն շուշանը, որպէս արդարների նշանակ,  
շարք հեղափոխութիւն ու ինքնատիպ իմաստային դրսևորում ունի Նարեկացու «Վարդավառի»  
Կրիստոսում:

Շուշանըն շողեր հովրին,  
Շողշողեր դեմ արեգականն:  
Այն հիւսիսային հաւէն  
Նով հարեալ գոհար շուշանին.  
Յայն հարաւային լեռնէն  
Քաղցր աղով ցաղեր շուշանին:  
Շուշանըն շաղով լցեալ,  
Շող շաղով և շար մարգարտով<sup>41</sup>:

Նոգեւոր խորհրդանշանների իմաստային-կառուցվածքային անգուցական  
համադրությամբ ու ներդաշնակությամբ, նշանական-այլաբանական խոսքի  
անկրկնելի բանաստեղծական արտահայտությամբ և գրական-գեղարվեստական  
բարձր արժանիքներով այս Կրիստոս, թերեւս, բացառիկ է ողջ քրիստոնեական հոգեւոր  
բանաստեղծական արվեստի մեջ<sup>42</sup>:

Վերոշարադյալը հիմք է Կրիստոսի հաստատման, որ  
ա. Նայ հոգեւոր (զանձարանային) Կրիստոսի խորհրդանշանի Կրիստոս-Գաղափարական

39 «Մեկնութիւնք խորանաց», էջ 281-282:

40 **Գրիգոր Նարեկացի**, Տաղեր և զանձեր, աշխ. Ա. Քոչկերյանի, Եր., 1981, էջ 95:

41 Անդ, էջ 118:

42 Այդ մասին մանրամասն Կրիստոսի **Ն. Ալվրեյան**, Վարդի և սոխակի խորհրդանշանները հայ միջնադարյան  
Կրիստոսության մեջ, Բանբեր Երեւանի համալսարանի, 1999, 1:

հիմքերն ու ակունքներն են՝ Աստվածաշունչ մատյանը, սուրբգրային մեկնությունները, Դիոնիսիոս Արեոպագացու «Երկնային Քահանայապետություն» և «Աստվածային անունների մասին» աշխատությունները, խորանների մեկնությունները և, հատկապես, «Երգ երգոցն» ու նշանական աստվածաբանության այս բարձրագույն արտահայտության՝ Գրիգոր Նյոսացու և Գրիգոր Նարեկացու մեկնությունները:

բ. Նայ գրականագիտության մեջ հոգևոր պաղերգության խորհրդաբանության անուրեստմը հանգեցրել է հոգևոր պաղի գնահատման ոչ համարժեք մեթոդաբանության, ինչի հետևանքով նշված պաղերի դավանաբանական-գաղափարական-աշխարհայացքային և գրական-գեղարվեստական քննությունն ու արժեուրմը խիստ թերի է և կարիք ունի հիմնովին վերանայաման: